

նութեան մասին, որով Որոգինէսը պարծենում էր հետախուզել անքննելի առարկաները, երկնային իրեր լինտել և քացատրել ամբողջ ս. Գերբը, որը և նրան խորին անկման հասցրեց*։ Առանձնապէս խիստ կերպով ս. Եպիփանը յարձակուում է ս. Գրքի քացատրութեան այլաբանական մեթոդի վերայ։ Սակայն Որոգինէսի հնդինականորութիւնը, որ գիտական աստուածաբանութեան համար նշանաբան էր դարձել, եկեղեցւոյ մէջ շատ մեծ էր։ Չնայած այդպիսի նշանաւոր մարդու կողմից, ինչպէս էր ս. Եպիպանը, նրա դէմ մղած կռուին, և Հռովմի ու Աղէքսանդրիայի (399 թ.) ժողովների բանադրանքներին, նրա նշանակութիւնը անդրդուելի է մնում համարեա եկեղեցական լայն շրջաններում նոյն իսկ Ե.՝րդ դարի առաջին կիսին, ինչպէս այդ կարելի է տեսնել Սոկրատի «Եկեղեցական պատմութիւնից»**։

Այդպիսով շրջանի վերջը եկեղեցական աստուածաբանական գիտութեան մէջ պարզ կերպով արտայայտուած երկու ուղղութիւններ մնացին—Աղէքսանդրիայի և Անտիոքի, երկուսն էլ մեղմացած դրութեամբ, և որպէս նախացուցմունք ապագայի նկատմամբ, միակողմանի աւանդական հոսանք աստուածաբանական գիտութեան դէմ իւր ընդգիմադեր կուսակցութեամբ։

(շարունակելի)

Արեակ վարդապետ



ԲԱՊԱ ԳԻՒՂԻ ԱԻԵՐՈՒՄԸ

ԺԱ.

Ասայոյ լուրեր. Գազիկ ուսուցչի դարձը. Հայերի չուն դէպի վերին Այփու գիւղը, նոր յարձակումն Չարգախուի վերայ. Բեգերի գաղսնի խորհրդակցութիւնը Կարաբեգովի մօտ եւ նրա որոշումները։ Սարգիս Արաբաջեանի դեսպանութիւնը. Ժանդարմների պեթի կարգադրութիւնը եւ հայերի ճանապարհորդութիւնը դէպի Չագեամ կայաւանը եւ դէպի Թիֆլիզ եւ դարձ։

Շարեշար արկածների օրեր էին այդ ժամանակ, սուտ ու զորդ լուրեր էին տարածւում ամէն կողմի վերայ, մթնոլորտը լի էր նրանցով։ Ասում էին, որ Ալլահեար ըէզ Զիւլգադարովը

* Гл. 8 и 3. Русск. перев. ч. 3. стр. 98, 83—84.

** См. напр. III. 23, VI. 7; VI 13; VII 6.

և նրա ազգակիցները սպառնալից և նախազգուշական նամակներ ստանալով Զարգախուռի հայերից, սպասում էին թէ մի գուցէ վրէժխնդրութեան յարձակումներ լինեն նրանց վերայ հայերի կողմից: Բէգերն զգում էին և հաւատում, որ Բաղայի աւերումը կարող է անհետեանք չմնալ: Մէկը լուր բերեց, որ ինքը Ֆընդղլուի ռուս մալականներից լսել է, որ դրացի Բաշքեանդ գիւղի հայերը կազմել են մի զօրախումբ 700—800 զինուած հոգուց բաղկացած, գալու են Բագլիգի և Քեշիշքեանդի վերայ և պէտք է այնպէս աւերեն, որ աւերակներն անգամ չերևան: Այնպիսի ժամանակ էր, որ այսպիսի լուրերին հաւատ ընծայողներ շատ կային:

Բէգերը և միւս թուրք հարուստները որոշել էին Բաղայի հայերին պահելով իրանց մօտ, պաշտպանութեան պատնէշ կազմել իրանց համար: Այդպէս էին բացատրում հայերը այն բէգերի մարդասիրութիւնը, որոնք հաւաքուել էին Բագլիգ՝ հայերին բաժանելու և պահելու իրանց մօտ: Այս նպատակով էին եկել Կոյլասարցի Սէօուն բէգ Զիւլգազարովը, Ալլահար բէգի որդի Մամմադ բէգ Զիւլգազարովը և ուրիշները: Այդ նպատակով էլ իբրև թէ Համիդ բէգը չէր թողնում հայերին գնալ Ղուլալի և այլն:

Թէ այսպէս և թէ այնպէս, Ղուլալի գնացող հայերից յետոյ մնացել էին դեռ մօտ 50 հոգի, որ Մամմադ բէգի հրաւերով պէտք է գնային Քեշիշքեանդ և միանային այն հայերին, որոնք Գրիգոր քահանայի հետ արդէն այնտեղ էին: Հէնց այդ առաւօտ, կիւրակէ, նոյեմբերի 27 Բագլիգ եկաւ 7 թիկնապահներով շրջապատուած Վերին Այիլուեցի, յայտնի Բէօուգաղա Կարաբէգովը և զիմելով իւր վաղեմի ծանօթ ծերունի Անտօն Շուշանեանցին՝ պատուիրեց, որ սա իւրայիններով պատրաստուի իւր հետ Այիլու գնալու և աղայի մօտ ընակուելու: Ուրեմն, բացի Քեշիշքեանդը հայերի համար նորից մի ընակավայր ստեղծուեց: Այդպէս էլ եղաւ: Անտօնն ընտրեց 31 հոգի երկու սեռից և պատրաստուեցին երեկոյեան գնալ Վերին Այիլու, իսկ միւս բաժինը Քեշիշքեանդ:

Սակայն սրանով Բագլիգը չզրկուեց հայերից: Բագլիգի բաժինը էլի մնաց: Ինչպէս վերը տեսանք, բէգի կացարանում առանձին մեծարում էին Ղահրաման Տէր Աբրահամեանցը, ուսուցիչ Գագիկ Տէր Աստուածատրեանցը և մի երկու ուրիշները և սրանք փակուած իրանց ընակավայրում, չէին խառնուում միւս հայերի շարժմանը և մտադիր էին գնալ Գանձակ: Գագիկ ուսուցչին մինչև անգամ ժամանակաւորապէս յանձնուած էր Մեհրալի բէգի երեսանց կրթութիւնը: Բագլիգ գա-

լուց 20 օր յետոյ Գաղիկ ուսուցիչը վերջապէս կարողացաւ մի նամակ հասցնել Գանձակ իւր հօրը, Մկրտիչ քահանային, որ մինչև այդ ժամանակ տոչորւում էր անյայտութեան մէջ կորած որդու ճակատագրի համար: Նամակի հիման վերայ ժողովրդական դպրոցների վերատեսչի միջնորդութեամբ Գենեքալ Նահանգապետ գնեքալ Ֆլէշշերը իսկոյն Բագլիգ ուղարկեց թիկնապահներով հանգերձ Գանձակի գաւառապետին, որ և յաջողութեամբ տարաւ Գանձակ Գաղիկն և իւր ընկերներին:

Գառնանք կրկին Բէօուզ աղայի խմբին: Երեկոյ է, շաբաթուօն սկսուեց դէպի Վերին Այիլու, որ հեռի է 15 վերստաչափ: Բէօուզ աղան հրամայեց իւր թիկնապահ թուրքերին, որ անգոր երեխանց վերցնեն իրանց գաւաղը: Առաջից գնում էին Բէօուզ աղան և թիկնապահների մի մասը, իսկ յետևից միւս թիկնապահները, որպէս զի մէջ տեղ գնացող հայերից ոչ ոք յետ չմնայ և չկորչի մթութեան մէջ: Հայերը զրոյց էին անում շատ կամաց, որ օտար թուրքերը չլսեն և յարձակում չգործեն, իսկ թիկնապահները խօսում էին իրար հետ բարձր և այլ նիւթերի վերայ:

Հասնելով իւր ընտանիքները՝ Բէօուզ աղան հրամայեց ծառաներին մաքրել իւր տան գետնափոր ներքնատունը, սինեւ ալաչուղի թաղիքը՝ վրան պարկելու և լուսաւորել ներքնատունը մի հատ սև նաւթի ճրագով: Ընթրիքին առեց մի փոքր հաց: Քնելու համար հիւրերը չունէին վրայի ծածկոց, իսկ գլուխներն տակ դրել էին մի մի քար: Առաւօտը Բէօուզ աղայի հրամանով երկու հայ կին ստացան ալիւր և սաջի վերայ հաց թխեցին հայերի համար: Երբեմն Բէօուզ աղան ինքը մանում էր ներքնատուն, սիրտ ու յօյս էր տալի հայերին, երբեմն էլ իւր մօտ էր ընդունում իւր վաղեմի ծանօթ Անտօն Նուշանեանցին: Ապա ցամաք հացին աւելացաւ և պանիր:

Այիլու գիւղացիներից մօտ հարիւր հոգի, ռաից մինչև գլուխ զինուած, Գեկտեմբերի 2-ին, ուրբաթ, գնացին Չարգախու գիւղի վերայ կռիւ: Նրանց պարագլուխներն էին Հաջի-Մուսա, Հաջի-Ալին, Ղարա Իսայ և մի քանի նշանաւոր կարգացողներն: Եղանակն ամպոտ էր, մօտիկ վայրերն անգամ չէին երևում: Նոյն օրը՝ երեկոյեան դէմ կռիւ գնացողները վերադարձան խիստ կոտորած սրտով: Չարգախուի վերայ յարձակումն եղել է շատ անյաջող թուրքերի համար, ըստ որում թուրքերի ասելով ամպով ծածկուած տարածութիւնը և հայերի դիրքերը լաւ չէին երևում, ուստի յարձակողները յանկարծ ընկել են դիրքերի շրջանը, շրջապատուել են հայերից և մեծ կորուստ են ունեցել, աւելի քան 20 հոգի սպանուած:

14 դիակ միայն կարողանում են ձիանց պոչերին կապել և քարշ տալ մինչև Այվիլու: Հաջի Մուսան, դրօշակակիր մօլլան, Հաջի-Ալին, Ղարա-Իսան և ուրիշ նշանավորներ կորել են, չեն մերադարձել, չգիտեն նրանց տեղը: Չարդախլուից սպանուել է միայն մի երիտասարդ-Շամիր Մարկոսեանցը:

Այս կռուի հետևեալ օրը, շաբաթ, Դեկտեմբերի 3-ին, յայտնի չէ թէ հրաւերով՝ թէ ինքնաբերաբար ժողովուեցին Բէօուզ աղայի մօտ Ալլահեար բէգ և Համիդ բէգ Ձիւլգազարովները, Շամբորեցի Հիւսէին բէգը, Կոյլասարցի Ղազիր տանուտէրը, Բահրամ բէգ Կարաբէգովը և ուրիշ շատ բէգեր և առաջաւոր մարդիկ, թւով աւելի քան 15 հոգի և խորհրդի կանգնեցին ամբողջ օր և ամբողջ գիշեր Բէօուզ աղայի տան դահլիճում:

Խորհուրդը և վիճաբանութիւնը պատուում էր Չարդախլուի անաջողութեան շուրջը: Ալլահեար բէգը այն միտքն է յայտնում, թէ ժամանակ է վերջ դնել կռիւներին: Բէգերի այս խորհրդին զանազան մարդիկ զանազան մեկնութիւն էին տալիս: Ոմանք ասում էին, որ խորհուրդը կազմուել է նոր յարձակումներ կազմակերպելու, և թուրքերից բռնի փող հաւաքելով՝ զէնքեր բերելու, ոմանք ասում էին, որ այդ ժողովում վճռուել է վերջ տալ յարձակումներին: Բայց երևում է, որ հաւանականը յարձակումներին վերջ տալն է եղել:

Գաղտնի խորհրդի հետևեալ օրը, կիւրակի առաւօտ, հայերին դուրս բերին բաց օդի մէջ, կանգնեցրին շալքով՝ որ Ալլահեար բէգը աեսնի: Այդպէս էր հաղորդել հայերին երիտասարդ Չարդայի բէգը-Բէօուզ աղայի որդին: Հայերը կանգնեցին այն պաաշգամբի դէմ, ուր խմբուել էին գաղտնի խորհրդի անդամները: Հայ երեխայքը լալիս էին: Հայ կանայք՝ ճանաչելով Ալլահեար բէգին՝ թուրք լեզուով զիմեցին նրան կէս յանդիմանական ձևով, թէ ինչի նա իրանց չպաշտպանեց և այս օրին հասցրեց: Ալլահեար բէգը պատասխանեց՝ թէ «Սաբաբի տունը Աստուած քանդի, ես այստեղ չէի, գնացել էի Գանձակ նահանգապետի պատուէրով»:

Ալլահեար բէգը ըստ սովորութեան յոյս տուաւ հայերին և Բէօուզ աղային պատուիրեց, որ հայերին լաւ պահեն և դոմից տանեն մի այլ բնակութիւն: Ապա ժողովը ցրուեց:

Դեկտեմբերի 5-ն էր, երկուշաբթի օր: Բէօուզ աղան դոմից կանչել տուեց վերեւ՝ իւր բնակարանը՝ բազացի Սարգիս Արաբաջեանցին, որ խկոյն գնաց: Գահլիճում, Բէօուզ աղայի առաջ շրջան էին կազմել Այվիլուեցի շատ թուրքեր: Պարագլուխն էր Կազիր տանուտէրը: Բոլորը լուռ էին և նայում էին

Արաբաջեանցի վերայ, իսկ սա դեռ ևս ոչինչ չգիտէր:

«Սարգի՛ս, դիմեց նրան Բէօուզ աղան—ձեռքին բռնած մինամակ—երեք օր առաջ Չարդախլուի կռուում* անյայտ կորել են Հաջի Մուսան և Կարա Իսան և մինչև օրս չեն երևում: Նրանց որդիքը և ազգականները ահա հաւաքուել են այստեղ և խնդրում են իմ միջնորդութիւնը: Ես կամենում եմ ուղարկել քեզ Չարդախլու և անձամբ տանել այս նամակը և տալ տանուտէրի հօրը, ճերուռի Պօղոս Բաբաջանեանցին, իմ կողմից էլ բարեւ: Սոյն նամակով ես խնդրում եմ Բաբաջանեանցին և դու էլ բերանացի կասես իմ կողմից, որ եթէ Հաջի Մուսան և Կարա Իսան կենդանի են թող արձակեն, իսկ եթէ մեռած են, թող տան նրանց դիակները: Գու, շարունակեց Բէօուզ աղան, պէտք է գնաս և վերադառնաս այս թուրքերի և Հաջի Մուսայի որդի Իսայի հետ: Քո կեանքիդ երաշխաւորը ես եմ, բոլորովին ապահով եղիր, որ այս մարդիկ և Իսան անվտանգ քեզ կտանեն և կբերեն. քեզնից աւելի յարմար մարդ ես չեմ կարող գտնել: Այսօր կգնաս և վաղը կվերադառնաս»:

Մինչև այդ ընդէն լուռ Սարգիսը պատասխանեց աղային թէ՛ եթէ դու ուղարկում ես, ես կգնամ: Թուրքերը ուրախացան և կրկնեցին միահամուռ, որ կեանքի մասին լինի ապահով:

Սարգիսին տարան անյայտացած Հաջի Մուսայի տունը, որ 3—4 վերստ հեռու էր Բէօուզ աղայի բնակարանից: Հաջի Մուսայի տանը Սարգիսը խիտ կասկածեց, թէ մի գուցէ վրէժխնդրութեամբ սպանեն իրան իբրև հայի, բայց երբ հիւրասիրեցին հացով ու մածնով, այն ժամանակ կասկածը փարատուեց: Սարգիսը 7 ձիաւորով ընկաւ ճանապարհ դէպի Չարդախլու: Ապա հասան Մեջլուլաւր թուրք օբլայի գոմերը, որտեղից սկսում է Չարդախլուի հողաբաժնի սահմանը, 14 վերստ տարածութեամբ մինչև Չարդախլու գիւղը:

Կանգ առան այդտեղ: Ժամանակը կէս օրից դէպի երեկոյ էր. թուրքերը մնացին այդտեղ, իսկ Սարգիսին ցոյց տուին Չարդախլու տանող ճանապարհը և պատուիրեցին նրան, որ վաղը մինչև կէս օր կսպասեն նրան այստեղ և վերադարձին, հեռուից, իբրև աղգանշան պէտք է ծածանի օդում իւր կարմիր թաշկինակը և որանք կարձակեն մի հրացան, որ մի գուցէ ընկնի Սարգիսը այլ թուրքերի ձեռքը: Այս պայմանանշաններից յետոյ Արաբաջեանը ոտով ընկաւ ճանապարհ և երեկոյեան աղջամուկջին հասաւ Չարդախլու:

* Ծանօթ. Վերջին յարձակումը Չարդախլուի վերայ եղել է 1906 թուի Յունուարի 18. տես Մշակ № 32-1906 թ. Մարտի 9. Գ. քահ. Մ. յօդուածը Չարդախլուից:

Նամակը յանձնուեց ըստ պատկանելոյն: Նա գրուած էր ռուսերէն. կարգաց և բացատրեց տեղական քահանայն հասարակութեան մէջ, որ հաւաքուել էր օրուայ չար ու բարիի վերայ խորհելու: Այդտեղ էր և բազացի Գրիգոր քահանայ Տէր Արրահամեանցը, որ դեսպանութեամբ եկել էր Ալլահեար բէգ Զիւլգադարովի կողմից:

Առաւօտը պատրաստեցին Բէօուզ աղայ Կարաբէգովի անուանը մի նամակ, որի բովանդակութիւնը մօտաւորապէս այս էր. «Զեր ուղած մարդիկ մեզնում չկան, գուցէ մնացած լինին կռուի դաշտում. նախքան ընդհարումները մեզնում կային 43 թուրք ծառաներ, որոնց մէնք իւր ժամանակին անվնաս դարձրինք իրանց ընակալայրերը, իսկ եթէ Ձեր ուղած մարդիկ լինէին մեզ մօտ, մենք ուրախութեամբ կարձակէինք նրանց, ինչպէս դուք ապահով պահում էք այժմ մեր հայերին: Հաշտութեան մասին, որ առաջարկում էք, մենք ընդունում ենք շնորհակալութեամբ. եթէ դուք չյարձակուէք մեզ վերայ, մենք էլ չենք յարձակուիլ ձեր վերայ և կլինի հաշտութիւն: Բայց եթէ Դուք, Բէօուզ աղա, գաւազանի ուժով թուրքերին ստիպէք կռիւ մղել մեր գէմ, հաշտութիւն չի կայանալ և մենք միշտ պատրաստ ենք կռուելու: ձեր ամեն մի նամակաբեր թող վստահութեամբ գայ մեզ մօտ և ապահով լինի իւր կեանքի մասին, մենք ապահով կընդունենք և ապահով կդարձնենք: Ընդունեցէք մեր հաւատարմութիւնը:» Նամակը գրած էր ռուսերէն:

Նամակը յանձնեցին Արաքսջեանցին և հեռաւոր տեղից եկած մի հասարակ զինուոր մասնաւորապէս խորհուրդ տուեց Սարգսին, որ աշխատեն հեռանալ Բէօուզ աղայի մօտից, որովհետեւ մի խումբ զինակիրներ իրան հետ մտադիր են յանկարծակի հիմնադատակ անել Բէօուզ աղայի տուն ու տեղը, ի վրէժ Բազայի աւերմանը: Սակայն հայերի Այվուլից շուտ կամ ուշ հեռանալու հարցը կախուած չէր հայերից իրանցից:

Երկու ուղեցոյցների ընկերակցութեամբ յետ դարձրին Սարգսին, որ սահմանին մօտեցած, բարձրացաւ դաշտի մի բլուրի վերայ և ծածանեց օդի մէջ կարմիր թաշկինակ փայտի ծայրին, որին հետեւեց հրացանի թնդիւնը: Իսկ հրացանի կիսից բռնած, դաշտի մէջ, նշանակեալ տեղը վաղուց արդէն կատաղաբար յետ ու յառաջ էր պտտւում և անդադար սպասում Սարգսի մօտենալուն: Սարգիսը հառաւ. Իսկան ընկաւ նրա վզին և արագ հարցրեց «Բաշընդա դէօննում, Հաջի-Մուսադան ըիր խաբար» (դիմովդ պտտուեմ, հաջի Մուսայից մի բլուր): Սարգիսը բացատրեց բերանացի, ինչ որ լսել էր, իսկ նամակի մէջն էլ ինքը չգիտէ, կասի Բէօուզ աղան: Իսկան կա-

տաղաբար այլայլուեց և նկատելով այդ 7 ուղեկիցներէն մինը ոմն քերթալայ՝ Սարգսից վտանգը հեռացնելու նպատակով աւելացրեց թէ «մեր մարդիկը կենդանի են և այդ հային իբրև օտարի՝ չեն յայտնել, ինչ ալլա՛հ, մեր մարդիկը կազմատուեն»։ Այսպէս յուսադրեց քերթալայը և ընկան ճանապարհ։ Բէօուգ աղան շնորհակալ եղաւ, կարգաց նամակը և բացատցեց բովանդակութիւնը։

Այդ օրը հայերին ներքնատնից բերին բէգի կացարանի մօտ մի առանձին սենեակ, ուր բէգի կանայք և հայ կանայք տյեղում էին իրար։ Հայերը երբեմն ստանում էին և միտ։ Այլիլուի թուրքերը տեսելութեամբ էին նայում Բէօուգ աղայի հայ հիւրերի վերայ։ Այլիլուի բնակիչներից մէկը մի հայ կին իւր երեխանցով իբրև ծանօթի տարել էր իւր տունը պահելու, բայց իւր հաւատակիցների ոմանց սպառնալիքներից ստիպուած երկու օր յետոյ նորից բերեց հայերի մօտ, Բէօուգ աղայի տունը։

Իւր տան բնակիչ հայերին Բէօուգ աղան ցոյց տուեց մի ծծկեր մանուկ, որին, ինչպէս ինքն էր պատմում, բերել էր Բազայից, նրա աւերման երկրորդ օրը, ուր գնացել էր նա իւր երկու որդու հետ Բադան տեսնելու։ Մէլիք Մերատեանցի տանը, երկու սպանուած կանանց դիակներէ արանքում այդ մանուկը լսլիս է եղել։ Բէգի տանը այդ մանուկը կերակրւում էր կաթի պտուկով։ Մնողները յայտնի չէին, որ բէգը վերադարձէր մանկանը, բայց կարծիքով նրա հայրը Ղահրաման Յահաննիսեանցն էր, որ այդ միջոցին Շամշադինումն էր և այնտեղից գնացել էր Քարվանսարայ գիւղը։ Բէօուգ աղայի մօտից հայերի գնալուց յետոյ այդ մանուկը արդէն մեռել էր։

Հայերը մնացին Այիլում էլի մի քանի օր և այդ ժամանակ Բէօուգ աղայի մօտ ձի առնելու եկել էր մի զինուորական ռուս, պօլիցիական ձիաւորների ուղեկցութեամբ։ Նա տեսնելով հայերի նեղ զրութիւնը և առհասարակ զրանց ներկայ լինակը՝ հարց առաջարկեց Սարգիս Արաքսանեանին, թէ ի՞նչ են մտադիր անելու այդ հայերը։ Սարգիսը պատասխանեց, որ այժմ իրանք նման են վանդակի մէջի թռչունին, որ հնար չունենալով դուրս թռչելու, գլուխը շարունակ դարկում է վանդակի պատերին։ Մենք էլ հնար ունենայինք՝ կը գնայինք այստեղից, բայց որում բացի այն որ անձամբ նեղութիւն ենք տալի բէգին, վախենում ենք, որ մեր պատճառով մեզ առող թուրքերը վնաս տան մեզ պատուարողին։

Յայտնուեց, որ զինուորական հիւրը Գանձակի ժանդարմների պետն է և պատուիրեց, որ պատրաստուեն վաղը իւր հետ, Բէօուգ աղայի ուղեկցութեամբ գնան Ձադեամ կա-

յարանք: Բայց, որպէս զի սպանուած թուրքերի ազգակիցները հայերին տեսնելով չթշնամանան Բէօուզ աղային, յետոյ այս կարգադրութիւնը փոխուեց: Ժանդարմներն պետք խոստացաւ օգնել և ինքը դնաց Գանձակ:

Հետեւեալ օրը դերմանական Անենֆելդ դադութից եկան 35 կազակ մի ուրեաղնիկով, ժողովեցին հայերին դէպի երկաթուղին: Հայ երեխայքը ցրտից ու քարերից պաշտպանուելու համար փաթաթում էին իրանց ռաբրը հին՝ դէն ձգած շորի կտորներով, թաղիքով և ինչ Բէօուզ աղայի քացակայութեամբ հայերը անհուն շնորհակալութիւն մատուցին աղայի կնոջը, խնդրեցին հալալ անել կերած հացը ու ընկան ճանապարհ: Ամենից առաջ դնում էր մի կազակ, նրա յետևից երեքը իրար կողքի, մնացեալները շրջան կազմելով ներս առան հայերին: Կանայք և երեխայք այդ ընկերին սկսեցին հեկեկալ և լալ, վախենում էին ճանապարհի վտանգից: Շարժուեցին դէպի Զագեամ կայարանը 4 վերստ հեռու: Հասնելով մի թուրքի օբա 3—4 տնից, ուրեաղնի՛ր հրամայեց կազակներին հրացանները պատրաստեն, քայց ոչինչ վտանգ չեղաւ: Ուրեաղնիկը կազակ ուղարկեց թուրք պրիստաւին և ճանապարհի վերայ ստրաժնիկներ կանգնեցրին: ճանապարհին կազակները երեխանցը հաց էին ըստանում իրանց պաշարից:

Կայարանի պահապան զինուորներն սպան կայարանի դահլիճում տեղաւորեց հայերին և 6 հրացանաւոր զինուոր նշանակեց նրանց վերայ: Բարի սպան չայով, հացով և մսեղէն կերակուրով կերակրեց և թուրք խանութներում նուէր ժողովեց ու յանձնեց հայերին 28 ռուբլի, որից 2 ռ. ծախսուած էր չայի շաքարի վերայ: Թուրք խանութպանները հաց կամ շաքար էին նուիրում, իսկ ռուս ըմպուրները ոտնամաններ էին ըստանում երեխանցը: Հետեւեալ օրը պատահեց այն քերթալայը, որ ուղեկցել էր Արարաջանեանին դէպի Զարդախլու. նա մորթեց մի ոչխար և կերակրեց հայերին: Հայերը Բէօուզ աղայի առնը մնացին ուղիղ 21 օր:

Այդ ժամանակ երկաթուղու յայտնի գործադուլն էր և միայն մի գնացք էր շարժում կայարանապահ զինուորներին հաց մատակարարելու: Նւ ահա հէնց այդ գնացքով 6 զինուորի հսկողութեամբ հայերին հասցրին Ազոտաֆա և այս տեղից մի այլ սպայի հսկողութեամբ նոյն գնացքով հասցրին Բիֆլիզ երեկոյեան 9 ժամին:

Թիֆլիզի կայարանը գործադուլի պատճառով լիքն էր զինուորներով: Ռուս սպան հայերին խաղարկեց զէնքի կողմից. Հայերն էլ սպաների դուրժը շարժելու համար յայտնում էին

բաղացի լինելը»: Ուղղում էին հայերին դուրս քշել կայարանից, բայց աղերսանքով մնացին գիշերը և նրանց պահում էին հայ զինուորները:

Առաւօտը պատահեց մի բաղացի, եկաւ և Մեօրոք քահանան, որ եկւոր հայերին շայով տաքացնելուց յետոյ առաջնորդեցին դէպի Սօլօլակ՝ Ղորղանեանի տունը, ուր ճաշարանն էր և ուր արդէն կային զանազան վայրերից հաւաքուած փախստական հայեր աւելի քան 300 հոգի:

1906 թուի յունուարի 3-ին բացուեց երկաթուղին և յունուարի 15 այս բաղացիք ցրուեցին, ոմանք Հաւլաբար կըռզէնցոց մօտ, ոմանք Շամշագին և ոմանք Գանձակ և այս տեղերից կրկին Բաղա:

Կր Շաբուհակուի

Քաջբերունի



Կ Ա Ն Տ Ի Ի Մ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Այս երկու կարեւոր կէտերում Կանտը ընդհանուր բան չունի նախ-Կանտեան փիլիսոփայութեան հետ: Սակայն նախ-Կանտեան երկու փիլիսոփայական անտիթեզերի մէջ կան ճշմարիտ սկզբունքներ, հարկաւոր էր նրանց համագրել մի նոր սիստեմ կառուցանելու համար: Եթէ խորը քննենք, կը տեսնենք, որ ողորդական ճիշտ է, երբ նա պնդում է, թէ հանրապարտադիր օրգան բանականութիւնն է անհրաժեշտ իմացութեան աղբիւրը և որ նա իբրեւ այդպիսին չի կարող հատ հատ ըմբռնութիւններից արտածուել: Էմպիրիզմը ճիշտ է, երբ պնդում է, թէ ճանաչելին պիտի տրուի միայն զգայութեամբ, որը իրականութեան միակ հաղորդիչ օրգանն է (բայց ոչ ինքնին իրականութիւն): Ռացիօնալիզմը ճիշտ է դատում իմացութեան կարեւոր մասի աղբիւրի մասին, էմպիրիզմը՝ նրանց գործադրութեան մթնոլորտի մասին (Ֆալկենբերգ): Այս կէտերում նրանք իրար ոչ թէ հակասում, այլ լրացնում են:

Ռացիօնալիզմը միշտ պնդում է գիտութեան անհրաժեշտութեան հանրաժեքութեան վրայ, ուստի առաջարկում է դեդուկցիան: Էմպիրիզմն ամենից առաջ հոգ է